600.0415.07.11.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 նոյեմբերի 2018 թվականի №415Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՎԱՉԱԳԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2010 թվականի դեկտեմբերի 28-ի №757Ա որոշմամբ անհատ ձեռնարկատեր Վաչագան Ավետիսյանին (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) տրամադրվել է ռադիոհաճախականության օգտագործման №0896 թույլտվությունը (այսուհետ՝ թույլտվություն),

բ) անհատ ձեռնարկատերը պատշաճ կարգով չի կատարել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17.1-րդ հոդվածով սահմանված ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների վճարման պարտավորությունը,

գ) Հանձնաժողովի 2015 թվականի հունվարի 14-ի №8Ա որոշմամբ անհատ ձեռնարկատերը պարտավորեցվել է ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով հաշվարկված 120 980 (հարյուր քսան հազար ինը հարյուր ութսուն) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

դ) Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 29-ի №371Ա որոշմամբ անհատ ձեռնարկատերը պարտավորեցվել է ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով հաշվարկված 91 824 (իննսունմեկ հազար ութ հարյուր քսանչորս) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

ե) Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2016 թվականի ապրիլի 27-ի №ԵՄԴ/0018/04/16 վճռով անհատ ձեռնարկատերը սնանկ է ճանաչվել, և նույն դատարանի 2018 թվականի փետրվարի 23-ի որոշմամբ անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ սկսվել է գործունեության դադարեցման վարույթ,

զ) անհատ ձեռնարկատերը 2018 թվականի հոկտեմբերի 19-ին դիմել է Հանձնաժողով՝ իրեն տրամադրված թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով,

է) անհատ ձեռնարկատիրոջ սնանկության գործով կառավարիչը 2018 թվականի հոկտեմբերի 23-ի գրությամբ դիմել է Հանձնաժողով անհատ ձեռնարկատիրոջը տրամադրված թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով,

ը) անհատ ձեռնարկատիրոջ՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով պարտավորությունը 2018 թվականի հոկտեմբերի 23-ի դրությամբ կազմում է 59 421 (հիսունինը հազար չորս հարյուր քսանմեկ) դրամ,

և հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1 հոդվածը, «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, 47-րդ հոդվածի 3-րդ մասը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը և Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի՝
   1) 2010 թվականի դեկտեմբերի 28-ի «Անհատ ձեռնարկատեր Վաչագան Ավետիսյանին ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №757Ա որոշումը,
   2) 2015 թվականի հունվարի 14-ի «Անհատ ձեռնարկատեր Վաչագան Ավետիսյանին ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների և հաշվարկված տույժերի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելը պարտավորեցնելու մասին» №8Ա որոշումը,
   3) 2016 թվականի նոյեմբերի 29-ի «Անհատ ձեռնարկատեր Վաչագան Ավետիսյանին ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների և հաշվարկված տույժերի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելը պարտավորեցնելու մասին» №371Ա որոշումը:

2. Անհատ ձեռնարկատիրոջը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում №900005281812 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով մինչև 2018 թվականի հոկտեմբերի 23-ը հաշվարկված 59 421 (հիսունինը հազար չորս հարյուր քսանմեկ) դրամ պարտքը::

3. Ընդունել ի գիտություն, որ անհատ ձեռնարկատերն իրավասու է.

   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.

   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատիրոջն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ **Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**

ք.Երևան
7 նոյեմբերի 2018թ.